պիսկոպոսն եկաւ. եւ ես ելեալ վազեցի զկնի նոցա եւ հասի. տեսի՝ զի Մուղնեցին եւ այլք զկնի բերէին զնա ի յԻզնիմիտոյ. քանզի նա եկեալ էր յԻզնիմիտ եւ գալոց էր ի Բուզանդ՝ կրկին չարութիւն հասուցանել։ Զայս լըւեալ քաղաքացւոցս ուղարկեցին զՋ աթոռակալսն՝ թէ հնազանդեսցի եւ խաղաղութեամբ գնասցէ առ կաթողիկոսն, եւ թէ ոչ՝ զնա կորուսցեն։ Գնացեալ անդ՝ և դարձեալ աթոռակալքն ի Բուզանդ, եւ Մուղնեցին բերաւ զնա անդ։ Եւ զայս տեսեալ իմ՝ թողեալ զնոսա ի ճանապարհին, զձեռս համբուրելով նոցա եւ վազելով դիմեցի ի տունն յայն, յորմ կաթողիկոսն նստեալ էր, հեռի Բ նետընկէց եւ զառիվերս, յորում նոցա պատահեցայ. եւ էր երեկոյացեալ եւ մութն զգետինն առեալ. հասի անդ Տեառն շնորհիւ եւ ումեք ոչինչ ասացեալ՝ մտի ի տուն յորում նստեալ էր կաթողիկոսն և վարդապետքն և իշխանք քաղաքին, և գնացեալ համբուրեցի զաջն և ասացի թէ Հոգեւորտէր, աւետիս քեզ, զի Յովանէս վարդապետն առեալ զԴաւիթ եպիսկոպոսն եւ գայ։ Եւ բազում ուրախութիւն եղեւ նորա եւ նստեալոցն, եւ ինքն զերեսս եւ զճակատս համբուրեաց եւ ետ ինձ մուշթուլուխ ծ զուռուշի մի չուխայ։ Եւ այն եկեալքն ոչ եկին անդ եւ ոչ բերին զնա, այլ առաւօտուս բազում խնդրուածօք բերեալ մուծին զնա առ կաթողիկոսն, եւ բազում ահ եւ երկիւղ տեալ նորա կաթողիկոսն. բայց Անտոն Չէլէպին ուղարկեաց մարդ եւ ձայնեաց զկաթողիկոսն ի միւս մեծ տունն իւր, եւ ելեալ գնացաք ամենեքեանքս անդ։ Եւ Չէլէպին երաշխաւոր եղեալ եպիսկոպոսին, զի այլ ոչ գայցէ աստ, եւ ի Հոգեւորտէրէն խնդրեալ, զի հետ տարցէ զնա. եւ ետ նմա ԲՃ զուռուշ, զորն ի պարտսն ետուր, զորն պաշար ճանապարհի, և վէքիլ արար զնա իւրն և ետ ԲՌ զուռուշ, զի շինեսցին զանկակատուն